ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1734-Ն որոշմամբ հաստատված պետական ոլորտի ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի չորրորդ փուլի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 4 և 4/3 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների բնակարանների վիճակահանության արդյունքում հավակնորդների թվի քանակային բացակայության պատճառով չխաղարկված 7 բնակարանների համար կրկին նախատեսվում է վիճակահանություն անցկացնել:

Վիճակահանությունը տեղի կունենա **2018 թվականի նոյեմբերի 17-ին, ժամը 10:00-ին** ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 4-րդ հարկ):

Տեղեկացնենք, որ բնակարանների վիճակահանությանը մասնակցելու համար ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով հավակնորդների ցուցակում ընդգրկված պետական ծառայողները (մասնավորապես՝ այն հավակնորդներն, ում 2018 թվականի նոյեմբերի 2-ից 5-ը կայացած վիճակահանության արդյունքներով ոչ մի բնակարանի ստացման իրավունք չի վերապահվել, և վերջիններիս կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտե չի ներկայացվել վճարված 400.000 ՀՀ դրամ կանխավճարը հետ վերադարձնելու դիմում) համապատասխան ծանուցմամբ կիրազեկվեն: